Հողին զրաւեցիք բանաստեղծութեան,  
Անկեղծ ազգի օրգիք բարեխօսութեան,  
Հիրոսաց գլխաւոր իրաւաբանը:

Եկող գացող շատ կայ մեր մէջ ճշմարիտ,  
Սակայն չեզաւ ձեզի նման սրամիտ,

Արդար ծնունդով կորան միամիտ,  
Ինչու է պէտք անբան ուսումնականը:



1907 ԹՈՒԱԿԱՆ

Հազար ինն հարիւր եօթը թուական  
Չնորհք պարզեցիր համբին ու խուլին,  
Աշերնիդ լոյս, հայոց յեղափոխական,  
Չնորհակալութիւն յայտնէք մամուլին:

Ահա նախ իմ համը լեզուս բացուեցաւ,  
Պէտք է բարձր խօսեմ ես խուլ Համիդին,  
Ահա քո էլ ժամանակը լրացաւ,  
Բայց նախ դիմելու եմ Անդրանիկին:

Մեր արդար խօսուածքէն իւր ականջները,  
Թէ չը լսեց ու գոնդատնիս շիմանար,  
Մենք կարդարացունենք մեր պահանջները,  
Ձեռք պիտի առնուի ամէն մի հնար:

**ԹԷ ԴՈՒ ՀԱՅ ԵՍ.**

Թէ դու հայ ես եզրայր ահա մի գրուած,  
Ան կարգայ, իմացիր ողբերգութիւնդ,  
Բաւական չէ մնաս լուռ ու մունջ նստած  
Քաջալերուէ, գոնաս սուրբ փրկութիւնդ:

Մայր Հայաստանէդ քեզ վկայ են կանչում,  
Փաստարան Անդրանիկ և շատ հերոսներ,

Այդ քո կրած կեանքէդ դու չես ամաչում,  
Աչքի առջև առած քո մարտիրոսներ:

Օտարում ըրեր ես քեզի ապաստան,  
Գերի թողած ծնողք և գերտաստանդ,  
Սպասում են քեզնից շուտով պատասխան,  
Գնայ ձեռքով կտրիր վեհ դատաստանդ:

**ՄԱՅՐ ԻՄ**

Մայր, իմ ինձ ծնար ո՛ւմ համար,  
Սրգիւնքս կը կրէ օտար,  
Ուղարկում ես ինձի պանդուխդ,  
Տանջուող դո՛ւ չես շարաշար:

Ինն ամիս պահիր արգանդիտ,  
Քնացուցիր ինձի բազկիդ.  
Ինձ քեզանից բաժանեցիր,  
Միթէ ափսոս չէ քո գաւկիդ:

Դեռ քեզանից կարօտ չ'առած,  
Պանդխտութեան ճիւղն եմ թառած,  
Միհրանս քեզի միշտ կարօտ  
Թող մնայ հեռու տեղ ընկած:

**ԲՈՒՆԱԳԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ**

Բռնակալ պետութիւն, ով Սուլթան Համիդ,  
Հայաստանի մասին եղիր միամիտ.  
Դու վայելէ միայն պապիտ ու մամիտ,  
Այսուհետեւ եղիր Չամի-Սուլթանը:

Մտածէ դու, սուլթան, մտածէ վերջոյ՝  
Քեզ էլ չը մնար միշտ այդ կէտէջոյ,  
Խեղճ հայերը եթէ որ շէլար մէջոյ,  
Ոչ որ էլ չէր լինէր քո սիրականը:

Լաւ իմացանք, ունիս սուրբեր կտրուկ,  
Հայերու մասին ես միայն ստրուկ,  
Բաւ է ծծես մեր արիւնը, ով տղրուկ,  
Թողլով մեր վրայ քո պաշտօնականը:

Օսմանցիք, թոյլ մի տաք, կտրեցէք հային,  
Չը նայելով ձեր թէ աղջիկ տղային,  
Թող հայը սպասէ իւր ապագային,  
Կարող է զիմելու ձեր հաշտութեանը:

Ընկել էք մէջերնիս, ինչպէս մի դազան,  
Ոչ բահանայ ճանչցար և ոչ սրբազան  
Պղծեցիք վանքերնիս և սուրբ աւազան,  
Կրկին զիմել տուիք մկրտութեանը:

Թէ զգացում ունիք կարող էք սգալ,  
Այդ բռնած զիրքերնիդ սխալ է սխալ.  
Չե գնից կը պահանջուի ամէն մի մտխալ  
Երբ որ բացուաւ հայոց մեծ վեհարանը:

Ինչպէս չը խղճացիք, անխ, դուք անխրաւ,  
Այսքան հայոց աշխատանքը ով կերաւ,  
Գազազ ամիրան չէր ձեզ փառքի բերաւ,  
Մինչև իսկ յանձնեցիք թագ ու նշանը:

Այժմս եղերէք միշտ հայոց հակառակ,  
Այլոց զէմը մեզի կնէք պախարակ,

Հայոց հարցմանը դէմ բերելով առակ,  
Գլխնուս կը կարդար ձեր փունճ գուրանը:

Գուք էլ իմացար որ հայն է անճար,  
Չեր գուրանը ցուցեր կուտար մեզի ճար,  
Չը նայելով եկեղեցի և տաճար  
Քայքայեցիք եկեղեցւոյ խորանը:

Թէ ունիք նպատակ վրէժ լուծելու,  
Գնացէք Սասնոյ դէմ նահատակելու  
Հայ քաջեր հոն էին ձեզ հետ կուռելու,  
Ճանաչէիք ով էր Մահմէդ Օսմանը:

Հետեւելով փունճ Սուլթանի խորհուրդին,  
Ի՞նչ կը տանջէք խեղճուկ հայ ժողովրդին.  
Չեզ օգնական առած վայրենի քուրդին,  
Խլեցիք թէ ապրուստ թէ գործարանը:

Օտարներին ձեզ կարծելով բարեպաշտ,  
Հաւատարիմ հայոց եղեր էք անհաշտ  
Մոռացար Աստուածնիդ, դարձար կռապաշտ,  
Պարպեցիք հայոց աղքատ գրպանը:

Այդ ձեր անգութ խիղճը ինչպէս համբերեց  
Աւուր հացի կարօտ տները պարպեց,  
Գիւ յօժար զլսլով զետին տապալեց  
Աւմեղ կոյս անարատ հայ աղջկանը:

Հայութիւնը բնաւ այս չը մոռանար,  
Թող պահէ այս ոխը մինչև դարուց դար,  
Իրաւունք առաջդ դնելով արդար  
Տես ինչեր պիտ կրէ անշահ ֆաթմանը:

Յայնժամ վերք բացուելով ձեր սրտի խորէն,

Չեր բերնով պիտ ասէք գտանք փոխարէն.  
Ահա նշանակէք խօսքս այս օրէն  
Թէ կամիք ընդունել ձեր պահարանը:

ԱՅՍ ԱՂԽԱՐՀՈՒՄ

Այս աշխարհում ընծայուելուս ինչպէս գանդատ չունենամ,  
Քանի որ թէ մահուան տէր եմ, կայ ինձի մի հալածող,  
Ջանքեր թափում եմ անխնայ, կեանք ու վայելք ունենամ  
Թէ չը կամի, ես ինչ անեմ որ ունիմ տէր ստեղծող:

Ոմանք ման կուզան մոլորուած, ոմանք եղան բազաւոր,  
Բազաւոր մոլորուածի գլխին կանգնած դատաւոր,  
Տեսնում եմ ես տեսնում եմ թէ աշխարհումս ինչ կլլայն,  
Տեսայ ոմանք խնդումի մէջ, տեսայ ոմանք էլ կուլան:

Ներկայիս միշտ վստահելով թէ աշխարհում մենք էլ կանք  
Աւագ, որ չենք մտաբերում այսօր կանք, վաղը չը կանք.  
Յիմարաբար կարծող շատ կայ, մերն է աշխարհ բովանդակ,  
Ոչ, սխալ ենք, մենք թուշուն ենք, նա մեզ համար է վանդակ:

Ասէք, այն ո՞ւմ է մնացել այս ունայն աշխարհումը,  
Խորին խորին մտածողին շուտ կը կտրի խնդումը.  
Ով է եկել այս աշխարհը, նմանապէս է գաղթեր  
Իբր մի հիւր եկեր անցել, ասէք ինձ, ո՞վ է յաղթեր:

Միայն խարուսիկ յոյսերով կանցնի մեր օր ու ժամը,  
Փշելով բնական զեփիւռ ցրում է մեր երամը,  
Մահը մեզ սեփհականացած, զրուած է մեզի առաջ,  
Կան ոմանք մահուան ձեռիցը, կուզեն փախ տալ ձախ ու աջ:

Օր ըստ, օրէ տարուէ տարի մեր կեանքն է պակասում,  
Գարձեալ մենք միշտ յիմարաբար լոյս աւուր ենք սպասում.  
Ահա ես այսպէս կը խօսամ ով էլ մնայ կենդանի  
Այսօրուայ փառքի փոխարէն, վաղը պիտ տայ երանի:

Ով կը յիշէ մեր նախնեաց հողն ու մարդը պտղաբեր,  
Բազաւորով այժմեան դարուց, բոլորովին է տարբեր  
Տառապում ենք զօր ու գիշեր ապրուստի մը ման գալով,  
Ողբերգութեան ձայնը թողած, աղքատը մնաց լալով:

Ըստ ու շատ են անիրաւներ, արդարին իրաւունքը  
Խլելով անխղճմտաբար, թափ կուտան արտասունքը.  
Քառսուն օրուայ քաղցած գայլի նման բերան բացած  
Յարձակում են խեղճ աղքատին, որպէս մի գազան կատղած:

Ամէն գործի ջանք գնելով, մոռացել օրէնք հաւատք  
Միայն անձնական շահերնուն դարձեր են թերահաւատք,  
Նախանձութեամբ պատճառ կլլան հարեւանի ապրուստին,  
Հարուստ աղքատին ատելով, աշխատում են կորուստին:

Ոչ հարուստ թող ուրախ ըլլայ, ոչ աղքատը յուսահատ,  
Միշտ սիրով միաբան լինինք, քանի որ մահ կայ հաստատ.  
Թէ կարենաք միշտ կամեցէք ձեր հարեւանին բարի,  
Թէ Աստուծոյ և թէ մարդկանց յանժամ կը յիշուիք արի:

Գրեթէ աշխարհը ծառ մ'է նա էլ ունի ժամանակ,  
Երբ կուզայ իւր ժամ ու վայրկեան, չենք մտար հասուն թէ խակ  
Ինչպէս պտուղն պարտէզումը գետնի երեսին փռած,  
Այնպէս էլ մենք հողի վրայ պիտի մնանք սփռուած:

Ուրեմն ո՞ւր է մեր կեանքը, ինչերնո՞ւս լինինք ուրախ,  
Քանի որ չունինք հաստատ լոյս որ կրում ենք ախ ու վախ.  
Թէ և ոմանք առ ժամանակ կը վայելեն ապագայ,  
Գա էլ ոչինչ անընդունակ մահուան ժամուն նա կզգայ:

Չէ մեր պապ ու մամբ եղաւ մեզ օրինակ Ազամ Եւան  
Թողին մեզի այս յիշատակ, որ պիտի մտնանք գերեզման,  
Որքան ապրինք ահա այս է մեր սղաւոր վիճակը,  
Ցանկարժ երկնքից պիտ պայթէ մահուան ատրճանակը:

ԱՅԺՄԵԱՆ ԴԱՐ

Այժմեան դարերի համեմատ  
Չը գիտենք լաւ և թէ վատ,  
Արդարութեան փոխարէն՝ մենք  
Տեսնում ենք անիրաւ դատ:

Միթէ չես տեսներ դու, Աստուած,  
Երկնային ամպերու տակից  
Ո՛վք են վախցող ջրհեղեղից,  
Սոգոմ Գոմոր կրակից:

Ո՛ւր է ծաղկաւէտ աշխարհդ  
Որ՞այժմս կերևի գոմ,  
Օրէնք հաւատի տեղը  
Ցանում ենք այլ և այլ որոմ:

Գարձեալ Տէր իմ վթարցող ես,  
Ներէ մերին յանցանաց,  
Թէ որ մենք ենք քո արարած,  
Թողութիւն տուր մեր մեղաց:

Ստեղծերես երկինք գետինք,  
Աստղ, լուսին, արեգակ,  
Թէ հաւքեր, թէ չորքոտանիք,  
Միմեանցը հակառակ:

Ստեղծերես մարդկանց համար  
Եւ աշխարհի իբբ գարդ,  
Իւրաքանչիւր արարածոց  
Պարգևեր ես պէս պէս գարդ:

Չորորդէն մին ստացեր է  
Պարգևածներուդ յոյսը,  
Երբորդ մասին պարգևեր ես  
Անյաջողութեան յոյսը:

Ստեղծերես որպէս թէ մարդ  
Քո գծովը հաւասար,  
Ոմանց ծովից կը ճամբորդես,  
Ոմանց դցած սարէ սար:

Թող խղճուկս գիշեր ցորեկ  
Ցիչէ Քո սուրբ անունը,  
Սակայն բնաւ մոռացուցիր  
Միհրանիդ տեղն ու տունը:

Թողեր ես օտարէ օտար,  
Փտարք միշտ տալով պատիժ,  
Արդարութեանս փոխարէն  
Հակառակ ինձ դարձան իժ:

ՈՎ ԱՂԽԱՐՀ

Ով աշխարհ, ստեղծուեցանք ցաւերդ կրելու համար,  
Մեր ժրաջան աշխատութեամբ շունինք մի ժամ միրոսդ  
գալար,

Գոնէ տուր քիչ հանգստութիւն, չարչարանքնիս է բաւական,  
Միայն լսկ ազրուստի համար ընկած ենք դաշտեր, սարէ սար:

Ոչ որ էլ յօժար չէ որ մեզ տրուած է այսպիսի մի կեանք,  
Պակաս չէ մեր գլուխիցը ամէն մի տեսակ փորձանք.

Քանի հիւր ենք եկել քեզի, չը տեսանք մի օր մը լոյսդ,  
Խաւարերես լոյսդ մեզնից, գոնէ մերժէ չուտով երթանք:

Հող էինք անդրէն, հող մնանք, չենք գիտեր որքան դա-  
րէ դար:

Սև հողին տակը մնալով թող մեր ոսկրը առնու դադար,  
Հողույ թռչնոյ հետ գործ շունինք, կարող է դատ վարել  
Աստուած:

Յայնժամ նա կը որոչէ մեզ ո՞վ է մեղաւորն ու արդար:

ԿՈՌԻՆԿՆԵՐ

Մի խումբ կռունկ տեսայ շտապով եկան  
Չայն կուտան մեզ տխուր տխուր երգելով,  
Ահա լուր բերեր ենք ձեզի սեփհական  
Թէ քաղաք, թէ գիւղերուն բաժանելով:

Խօսէք կռունկ, խօսէք, ձայներնիդ անուշ,  
Ձեր անուշիկ ձայնից սիրտս լեցուաւ փուշ,  
Ի՞նչ պատճառեց ձեզի որ մնացիք ուշ,  
Սպասում ենք ձեր ձայնին կարօտելով:

Պանդուխտներնու մասին պատգամաւոր ենք,  
Բաղդատու, Պասրատու բնաւ պակաս չենք,  
Տարին մի անգամ մը մենք շրջան կընենք,  
Չտապով ենք եկել օդը ձեզքելով:

Լուր ունինք ձեզ այսպէս, սիրելի մայրեր  
Կարօտնիդ կը կրեն միշտ ձեր զաւակներ,  
Մնացեր են խեղճուկ, օտար երկիրներ,  
Կանցնեն օրերնին դառն սուգերով:

Մեզ դանդատուեցան թէ օտար ենք օտար,  
Չատ խնդրուան, մեզանից էլ բարև տար,  
Թող լաց ու կոծ շանեն մեր անուշ հայր մայր,  
Կեանքերնին չը փոխեն մեզ սպասելով:

Ահա այսպէս ձևը դաւակունք խղճալի  
Բաժանուեր են հարից ինչ զարմանալի,  
Տեսած ենք վարքերնին ծանր, ցաւալի,  
Մտում են շարաշար աշխատանքներով:

Տեսանք ոմանք մերկ էր, ոմանք էլ քաղցած,  
Ոմանք էլ քամակին ծանր բեռ առած,  
Դէմքերնին էր տխուր, սրտերնին վառուած,  
Բացած են մարմնոյ վէրքեր տեսակով:

Խղճացէք ձեր պանդուխտ խեղճ զաւակներին •  
Զուր կը փճացնեն իւրեանց կեանքերնին,  
Տեսէք, հաւատացէք նրանց վէրքերնին,  
Օտարը տանջում է, լուծեր դնելով:

Անհամբեր կը մնանք ձեր պատասխանին,  
Մեզանից էլ բարեւ յիշէք Միհրանին,  
Կամ թէ սպասեցէք մեր վերադարձին  
Թէ որ մահ չստանանք որսկանի ձեռքով:

ՀԵՅ ԱՉՔԵՆՅԵՆ

Ա՛խ, այս ինչպէս բազդ է հայ ազգանունը,  
Ուր էլ որ գացի ինձ շը տուին պատիւ,  
Մեր ձեռքով քանդեր ենք մեր ազգի տունը,  
Թշնամիք ըրել են մեզ հեծելանիւ:

Յանկարծ միտքս ընկաւ վեհ Հայաստանս  
Սկսեցի լինել ներքին սիրահար,  
Չեռք առի իմ պաշտպան սիրոյ բերդանս  
Հայրենեացս սիրոյն ընկայ սարէ սար:

Իմ գոր ու գիշերս անյայտ շը գիտեմ,  
Մար ու ձոր ըրել եմ իմ օթեանը,  
Թէև մի կեանք ունիմ ինչու խնայեմ  
Որ օտարը կ'ատէ մեր ազգութեանը:

ԵՍ ԹՈՂ ԼԻՆԻՄ

Ես թող լինիմ Հնչակ իսկ դու էլ Գաշնակ,  
Մկրտուած ենք երկուքս էլ մի աւազան  
Ինչո՞ւ ենք մենք միմեանցս հետ ներհակ,  
Ո՛վք են որոմ ցանոց մեր մէջ զանազան:

Եկ, հարազատ եղբայր, սիրով լինինք հաշտ  
Ինչ պայմանաւ միմեանցից պիտ գատուենք,  
Ուզողենք կուուողներին պատերազմի գաշտ,  
Կարելի է սէր միութեամբ ազատուենք:

Կուուենք հաշտ կերպով որպէս կուուեր են  
Մեր նախնիքները հայրենեաց համար.  
Կոտորել, կոտորուել երբէք նշան չեն,  
Գոնէ թող մեզ շասեն յիմար են յիմար:

ԵՒՐՈՂ.

Ա՛խ, դու կախարդ եւրոպ, ո՛ւր է քո յօղուած,  
Որ հայերս քեզմով էինք համոզուած,  
Մինչ այժմ էլ քո յոյսով մնացինք խաբուած,  
Միթէ այսպէս էր քո արդար պայմանը:

Ապերախտ եւրոպա, բաւէ որ խաբէք,  
Չեր շնորհիւ հայոց արիւնը թափէք,  
Խաբէութեամբ կուզէք հային հալածէք  
Պատճառներ լինելով անմեղ արեանը:

Քաղաքակիրթ եւրոպական պետութիւն,  
Մի սխալուիք, էլ չ'խաբուիք հայութիւն,  
Այսու յետոյ հայոց չկայ լուսթիւն,  
Փոխարէն կը գտնաք ձեր վատութեանը:

Չերդ շահից համար ամէն բան կանէք,  
Երբ շահ տեսնաք արդարութիւն կը վանէք,  
Աշխարհումս ձեզի կրթեալ կանուանէք,  
Բայց ոչ որ հաւան չէ ձեր կրթութեանը:

Հաւասար էք ինչպէս ծովային ձկանց,  
Որպէս կը կլլեն մեծերը մանկանց,  
Երեսաբար քաղցր, բայց իժ էք տկանց,  
Այժմս թող ձեզի հարգէ դիւրահաւանը:

Անգղիայ, լաւ սրիւր քո սուր ու դանակ  
Տաճկին առաջնորդիք հային փոխանակ,  
Ես քո անուն կուտամ արիւնապապակ,  
Հայք թող չսպասեն քո միջնորդութեանը:

Միամիտ հայերուն ոտքի հանեցիր,  
Բռնակալ պետութեան ձեռքը յանձնեցիր,

Հեռատեսութեամբ միշտ հայոց ծաղրեցիր,  
Որի շուղարկեցիր քո ոստիկանը:

**ԵՐԿՈՒՔԴ ՄԻԱՍԻՆ.**

Հնչակ, և դրօշակ, երկուքդ միասին  
Գուք շատ հետևեցար փրկութեան դասին,  
Արտասունք թափելով հայրենեաց մասին  
Արեան հեղեղ վազցրիր ամբողջ սահմանը:

Նպատակնուդ արժանանաք, սիրելիք,  
Բաւէ հայոց ազգը լինի խաղալիք,  
Մինչ երբ այլեւո՞՛ք ովկեանի ալիք  
Նա միշտ խաղտում է ձեր արդար, հիմանը:

Որբ ազգի տղերք, հարազատ որդիք,  
Մինչ այսօր կը կրէք ազգային կնիք,  
Թէև չեմ իմանում ինչէ՛ ձեր դադանիք,  
Որ մոռացար իսկոյն խեղճ Հայաստանը:

Թէպէտ հայրենեաց միշտ դուք հեռատես էք,  
Պարթևի գրիչով ականատես էք,  
Քաղաքականութեան էլ ինչ կոպասէք  
Հայոց արեամբ շաղախելով մեկանը:

Չտապեցէք տալու վերջին հարուածը,  
Բաւականէ անմեղներու խարուածը,  
Նոր լոյս ծաղկեց հայոց արեան թափուածը  
Պատրաստուած վրէժխնդրութեանը:

Մեր շարժումը կախում ունի ձեզանից,  
Քաջութիւնը պահանջեցէք մեզանից,

Գուրս վանենք թշնամիք մեր ապաստանից,  
Ազուարը թող չերգէ մեր երգարանը:

Մինրդ ծնէվայում և մինրդ Լօնդօն,  
Հաստատեր էք հայոց ազգին կետրոն,  
Կ'երգէք ժողովուրդին յառաջ ու հապօն,  
Ինքներդ կանգ առած արտասահմանը:

**ՀԱՅՐԻԿ ԽՐԻՄԵԱՆ.**

Ով Խրիմեան Հայրիկ, ով դու վեհափառ,  
Հայ սրտերուն մէջանեղ բուրեցիր բուրուառ,  
Կարգալով մեր գլխին քարոզ և թէ՛ ճառ  
Միշտ բարձրացուցիր դու քո աստիճանը:

Վեհափառութեանդ եկել եմ ես հիւր  
Ազգային ցաւերով սիրաս լեցուած բիւր,  
Ինչո՞ւ չը դադարիր քո երկու աղբիւր,  
Որ կը հոսացունես դէպ սվկիանը:

Փառք, երանի կուտամ, կուտամ այս աւուր,  
Էլ հայերը պէտք չէ մնայ լոււ տխուր.  
Վարազայ վանքիցը թէպէտ ունիմ լուր,  
Ջանք են թափում կաց հիման քայքայմանը:

Թող քանդեն վանքերնիս, թող քանդեն անով,  
Կուզեն թող շաղազեն հայոց արիւնով.  
Հին աւերակները կառնենք թանկ գնով,  
Ծառայող ենք արդէն նոր շինութեանը:

Քաջ Անդրանիկ որ ընկած է առջնուս,  
 Յոյս ունինք որ սև պիտ չգայ երեսնուս,  
 Այս փառքն է որ վրա հասաւ հայերուս  
 Ձեռքը մեկնեց հայ աշխարհի հիմանը:

Արի, զթայ հայրիկ, կուտամ ձեզ բողոք,  
 Մտածում եմ, չունինք ձեզնից գատ ոչ որ,  
 Մեր յոյսն ու հաւատը միայն դուք էք լոկ  
 Թշնամիք պաշարեց մեր արշաւանը:

Մենք Հայրիկ ենք գոչում, բայց դուք միշտ լուսմ,  
 Աշխարհ թնդաց հայոց գոչում և գոռում,  
 Մեզ յոյս չկայ օտար պիտական դռնում,  
 Հանձար է նուրբ զեկզ բարելաւմանը:

Վայելեր էք սուրբ յաթուռին կտակը,  
 Ազգիդ թողած օտար հովանու տակը,  
 Այսպէս գնայ հայը կուսայ յատակը  
 Մինչև շարժում տալու ձեր քննութեանը:

Խորին ատելութեան, խորին լուսութեան  
 Որպէս համբերում էք, Հայրիկ Խրիմեան,  
 Չզլծան գցին ոտդ վեհափառութեան,  
 Թողին լոյս աշխարհի խոր մթաբանը:


Փորձուար և գտուար ամէն մի շրջան,  
 Փողովուրդըդ քեզի կոչեց Հայրիկ ջան,  
 Մինչ ստացար Լուսաւորչայ աստիճան  
 Հասար մայր աթուռի ընտրութեանը:

Գրաւում ես մեզի քո սուրբ կրօնքով,  
 Տանջում ես մեզ օտարների օրէնքով,  
 Հայոց ազգ ապրում է միայն օրհնէնքով,  
 Կամ այլ և այլ յոյսի բացած բերանը:

Հայրիկ, ո՞վ յիշեց քեզի, այդ Խրիմեան, անունը Հայրիկ.  
 Ո՞վ ձեր անուն կոչեց կանխիկ, ո՞վ էր ձեզ մարգարէացող,  
 Բնաւ ես քեզի չեմ ճանչնար, քանի որ ես չունիմ մայրիկ,  
 Հապա որ ես մանկիկ էի, ո՞րի չեղաք ինձ հողացող:

Այս քանի դարերէ ի վեր մայրս մնում է որբացած,  
 Մեզի թողնելով հայրենիք, ինքներդ եզաք օտարացած,  
 Երբէք խնամք չտանելով թէ սրանք են մերկ ու քաղցած,  
 Մի՞թէ դուք չեղաք մեր սրտին բազմատեսակ վէրքեր բացող:

Մայրիկս տրտում ու տխուր կսպասէ միշտ օգնութեանդ,  
 Որդիբը միշտ աղօթող են կենաց վեհափառութեանդ,  
 Որքան շահուելդ մեզ լուր տաս ձերունի պանդղտութեանդ,  
 Մի՞հրանիկդ ճանապարհիդ միշտնական թող մնայ լացող:



ԱՐԺԱՆԻ ԶԵՄ.

Արժանի չեմ մի՞թէ, երկնաւոր Աստուած,  
 Ականատես լինել հային ազատուած,  
 Գարնան ծաղիկի պէս սրտիս վարդ բացուած,  
 Սոխակը գար երգել իմ բուրաստանը:

Ասող, լուսին, արեգակ, աշխարհ անթաւամ  
 Այս տխրալի ցաւս ձեզի կը բառնամ,  
 Թէ չտեսած մեռնեմ, օտար հեռանամ  
 Մի օր լոյս տաք գերեզմանիս շիրմանը:

Գոնէ ելնեմ գրկեմ իմ մայր Հայաստան  
 Բաց դռները տեսնելու ազատութեան,  
 Յետոյ մտնամ գերեզմանս անսասան  
 Ենչեմ խոր քնուս մինչ յաւիտեանը:

Յայնժամ ես կլինեմ միշտ ձեզի հետ հաշտ,  
 Կարծելով թէ դուք էք հայոց բարեպաշտ,  
 Հայն էլ չլինելով վախկոտ հոգեպաշտ,  
 Անցքերէն թող յիշէ Վասպուրականը:

Ձեռք առնելով գրիչ և կաղամարը,  
 Նորից նոր թող գրուի հայոց տոմարը,  
 Վեց դարերի անցքէն բարին և չարը  
 Պարտաւոր է գրել հայ պատմաբանը:

Պատմութեան էջը միշտ այսպէս գրելով,  
 Գուր Պարսիկան դիմաց միշտ ներհակելով,  
 Քաջ Վարդանի կտակ շմուռանալով,  
 Արագընթաց դիմել գուր Պարսկաստանը:

Ասէք, ով Պարսկաստան, նախ տայլով բարև  
 Բաւ չէ որ ձեր վերայ ծագեցաւ արև,  
 Քաշեցէք գլխերնուդ ձեր քողերը սև  
 Ահա կրկին կուգայ, մեր Գայլ Վահանը:

Մնացորդ հայերն էլ ասելով Սուլթան,  
 Միշտ մղուելով առաջ դէպի Չամ երթան,  
 Միասին առնելով մի կտոր չորթան,  
 Ասեն, հայր չըաւ ձեզ մտահանը:

Փափագ ունինք դիմել ձեզ հիւր մի աւուր,  
 Թէ ինչու մնացիք այս չափի տխուր,  
 Ահա Հայաստանից ձեզ բերեր ենք լուր  
 Ցաւակիցէ քո վատթար գրոթեանը:

Ինչ պատահել է ձեզ ով դու օսմանցիք,  
 Ձեզ հոգատար կը լինի հայաստանցիք,  
 Հայերին մի կարծէք ինչ յունաստանցիք  
 Ձեզ սիրով կրնդունէ մեր աւագանը:

Ձեր ըրած փոխարէն մենք չմոռացանք  
 Այսօր ձեզ դիմելու պարտաւորեցանք,  
 Ի՞նչ կասէք Օսմանցիք, սրն է մեր յանցանք  
 Վէրքերնուս ճար չեղաւ մեր զեզարանը:

Քաշելով Լևոնի սուրը ժանգոտած,  
 Ջարդը տալով թիւրքի դիակը դիպած  
 Ձեզ էլ վրէժխնդիր միայն սա թողած,  
 Պարսկահայք դիմեցէք Չամի թաղմանը:

Այնուհետ դիմելով հայոց գերեզման  
 Ձեր ուրախութիւնը լինի անսահման,  
 Երգեցէք հերոսաց զոհերու վրան  
 Ներկայացէք հայ հոգեհանգստեանը:

Կարելի է ձեր ուրախ ազգակէն  
 Մեր ախանջը լսէ սև հողի տակէն,  
 Ուրացիք չը լինիք ձեր նահատակէն,  
 Ծխելով աճուշահոտ խնկամանը:

Յետոյ ձեր փառքով միշտ կամաց կամաց  
 Վրէժխնդիր լինելու էք թշնամեաց,  
 Աշխատէք գտնելու գարման վէրքերաց,  
 Դիմաւորելով դէպ մինչ Հնդկաստանը:

Ո՛հ յայնժամ ես էլ լինէի ձեզ հետ,  
 Ճեղքելով անցնէինք թէ ծով և թէ գետ,  
 Հայկական ալիքը շարժելով վէտ վէտ,  
 Տիրէինք արևելք արևմտեանը:

Ներհակելով Մուհամէդի որդւոցը,  
 Վզերնուն դնէինք կտրուկ սղոցը,  
 Ներկելով խաղաղ ովկիանի ծոցը,  
 Սրէ կանցունէինք մի տարեկանը:

Ընդհանուր աշխարհը լինելով խաղաղ  
 Քրիստոս Մահամէդի չէր լիներ մատաղ,  
 Մինչ երբ երգելու են փուճ գուրանի տաղ,  
 Ոչ թէ թուրք պարսիկը այլ գանազանը:

ԳԱՍԻԹԱՆ

Արմենեան, Հնչակեան և Գաշակցական,  
 Երեք գլինուր միմեանցը պատահեց,  
 Սկսեց մի լեզուայ կռիւ հայկական.  
 Արմենեան գլինուրը այս հարցը դրեց:

Արմենեանը ասեց, Հնչակ և Գաշակ,  
 Ի՞նչ թափում էք դուք ճիգ ու ջանք շարունակ  
 Ասէք, դուք ի՞նչ գործքով ունեցաք հռչակ,  
 Որ տասն հինգ տարով կռիւ մղեցիք:

Հնչակեանը ասեց, պարոն Արմենեայ,  
 Կը խնդրենք քեզի քիչ հեռի գնայ  
 Այժմս քեզ կը վատաբանեմ անխնայ  
 Գուր հայկական ասպարէզից հեռացիք:

Գաշակեանը ասեց, ի՞նչ է ձեր դատը,  
 Հաշտուեցէք եզրայրք, ես լինիմ վատը  
 Ոչ Գրիգորն էր մեզօք ոչ էլ Տրդատը,  
 Միայն սէր ու միութիւն չը պաշտպանեցիք:

Արմենեանը ասեց որ նախ մենք էինք  
 Հայրենեանց ցուերը միշտ կը գրէինք,  
 Մենք միակ հայրենիք ինչպէս տիրէինք,  
 Մեր հոգս ու ցաւերն էլ դուք չը լսեցիք:

Հնչակեանը ասեց այո՛ գիտեմք ձեզ,  
 Կույտուրական ձեռով գրաւեցիք մեզ.  
 Հայրենիքի մասին ինչ կարիք կայ քեզ,  
 Կամ թէ մեզի նման արիւն թափեցիք:

Գաշակեանը ասեց բերան մի բանաք  
 Գուր վայելել գիտէք այլոց հպատակ,  
 Ինձ հարցունէք, ոչ մի ժամ չէք ընդունակ,  
 Ձեր Գաշակ եղբօրը սրի շօղնեցիք:

Արմենեանը ասեց շունինք դուր արիւն  
 Որ թափենք անխնայ և գնայ կորիւն,  
 Հէնց այս էր որմենք քաշուեցանք մի անկիւն  
 Երբոր տեսանք ձեր մէջ մեզ շնդունեցիք:

Հնչակեանը ասեց կտրաւ համբերանք,  
 Չուզեցինք վայելել մենք այս դառն կեանք,  
 Հրաւիրեցինք ձեզ որ կռիւ բանանք  
 Ազատ երկիրներում ձեր կեանք պահեցիք:

Գաշակեանը ասեց մենք շուտ զգացինք  
 Անօգնական հայրենիքի դատ բացինք,  
 Մենք ձեր մասին շատ ողբացինք ու լացինք,  
 Ո՛հ, մեր բազդի վերայ երես դարցուցիք:

Արմենեանը ասաց մենք միշտ ձեզ ասինք  
 Ժամանակ չէ կռուել շատ կը վնասուինք,  
 Մենք չիշեցինք որ թէ քիչ է սպասինք  
 Եւրօպացոց վրայ յոյսեր դրեցիք:

Հնչակեանը ասեց չէր լինիր մնաս  
 եթէ որ մենք բաժան չըլլայինք մաս մաս,  
 Այժմս մեր գլխին ինչ հրահանգ կտաս  
 Մեզ յայտնի է որքան որ փառք սիրեցիր:

Գաշնակեանը ասաց եկէք միանանք,  
 Միութեամբ մեր վէրքին դարման մը գտնանք  
 Լոկ միութեամբ գուցէ ստանանք փրկանք,  
 Բաւական է եղբայրք որ համբերեցիր:

Արմենեանը ասեց մենք չենք միանար,  
 Ամէն ոք իւր համար թող գտնէ հնար  
 Ես լաւ գիտեմ որ մենք չենք սիրեր իրար,  
 Այժմէն սկսած մեզ կեղծ համարեցիր:

Հնչակեանը ասեց որ մենք ինչ անենք,  
 Մի շնորքնիդ չկայ որ գովաբանենք,  
 Այո եղբայրնիդ ենք ձեր ցաւը տանինք  
 Բայց մի օր դուք երբէք մեզ չ'որոնեցիր:

Գաշնակեանը ասեց Աստուած վեր վկայ  
 Երկուքիդ մօտ էլ ոչ մի խիղճ չը կայ.  
 Տաճկահայաստանի կռուից նոր եկայ  
 Այսօր էլ իմ դիմաց ինչ դատեր բացիր:

Արմենեանը ասեց, որն է Հայաստան  
 Որի թողիր ու հեռացար ապաստան,  
 Կը խնդրեմ որ տաս ինձ մի պատասխան  
 Կուուոյ ասպարիզից ինչու գաղթեցիր:

Հնչակեանը ասեց չունինք թնդանօթ  
 Այդ հարցիդ փոխարէն ամօթ քեզ, ամօթ,  
 Կեղծ անուններով էք հայրենեաց ծանօթ  
 Միայն սիրոյ արդիւնքները գրկեցիր:

Գաշնակեանը ասեց զարնել զարնուել  
 Թշնամեաց դէմ միայն պէտք է պարզուել,  
 Մենք սուրբ ծրագրէ երբէք չենք զգուել  
 Գառն բանբասանքով սիրտերս վառեցիր:

Արմենեանը ասեց կռուոյ ծաղիկ էք  
 Հայրենեաց սիրուն միշտ ծլէք ու ծաղկէք,  
 Չեզ ծնող մայրն ենք, մեզ զուր մի ծաղրէք  
 Պարզ ենք վաղուց, ինչո՞ւ կլլաք ուրացիր:

Հնչակեանը ասեց մենք չենք ուրանար  
 Ժիւ աշխատանքներնիդ երբէք մոռանար,  
 Ճերմակ թուղղ սև մելան ընելով քնար,  
 Հայկայ սերունդին մէջ վարձքով ածեցիր:

Գաշնակեանը ասաց ունինք աշխատանք,  
 Մեզի նման երբէք չունեցար մի ջանք  
 Բանդ, շղթայ, կախաղան, ամէն մի տանջանք  
 Կրելով մենք միակ յիմար յայտնեցիր:

Արմենեանը ասեց ունինք իրաւունք  
 Այսու առթիւ չը փոխեցինք մեր վարմունք,  
 Չատ վառակը մեզ չը բերեր արդիւնք,  
 Հայրենիքի վարքն ու փառքը կորուցիր:

Հնչակեանը ասեց դեռ մենք չենք մեռած  
 Կամ թէ ովկեանի մէջ տեղ ընկղմած,  
 Սէրը ոչ մի անգամ չը թողներ քնած,  
 Միշտ անշահ դրութեամբ մեզի խաբեցիր:

Գաշնակեանը ասեց այս քանի տարին  
 Չարը կորցունելով պիտ գտնանք բարին,  
 Կուզէք օգնէք թէ ոչ, գլուխնիդ քարին  
 Ողջ լինի մեր քաջեր և ժիր Սասունցիր:

Արմենեանը ասեց: մ'նէք այդ յոյսը  
 Կուզէք մուծը ընկէք և կուզէք լոյսը,  
 Գիտեմ պիտ չորցունէք հայրենեաց բոյսը,  
 Բաւ համարէք որքան որ կոտորեցիք:

Հնչակեանը ասեց առանց կոտորած  
 Աշխարումս ոչ մի ազգ չէ ազատուած.  
 Մենք կ' կուուենք միայն յոյսդ դրած Աստուած,  
 Ա՛փսոս հայ անունը որ վայելեցիք:

Դաշնակեանը ասեց լինէր միութիւն  
 Յիրաւի որ կը տանէինք յարթութիւն  
 Միութեան դէմ ինչ է գանել փրկութիւն,  
 Հնորհակալութիւն որ կատարեցիք:

Արմենեանը ասեց, մենք ունինք մի ձայն  
 Ոչ թնդանօթնիս կայ և ոչ հրացան,  
 Ամէն մէկս անկիւններում ցիր ու ցան  
 Ինչպէս պատերազմի փողեր հնչեցիք:

Հնչակեանը ասեց ազնիւ մակարդը  
 Թշնամեաց դէմ միշտ պիտ լարէ թակարդը,  
 Թէ որ կրող չէիք հայրենեաց դարդը  
 Սկզբանէ ինչու գլուխ վարեցիք:

Դաշնակեանը ասեց ձեզ չենք սպասեր  
 Արով ունինք եռանդ և ազգային սէր,  
 Եթէ որ լինէիք իսկ հայրենասէր  
 Կէտը եկած ժամուն հում սպասեցիք:

Արմենեանը ասեց ձեզնից առաւել  
 Թէ որ ժամանակ գայ, սենք գիտենք կուուեր,  
 Մենք շենք կամիր երբէք իգուր անդ մեռնել,  
 Ո՛ւր է դրօշներնիդ որ ծածանեցիք:

Հնչակեանը ասեց սէր տալով փողին  
 Եւ թէ վայելեցիք փափուկ անկողին,  
 Ափսոս չէ կեանքերնիդ, որ պիտ տաք հողին,  
 Մի պատճառաւ հանգստութիւն տիրեցիք:

Դաշնակեանը ասեց դիտենք բաներնիս  
 Թէ որ մի գրօշ էլ չըլլայ գրպաննիս,  
 Խնդրում եմ որ չը բանաք բերաննիս  
 Հեռատեսութեամբ դուք լաւ երագեցիք:

Արմենեանը ասեց մենք կը երագենք  
 Եւրոպայ բողոքել ձեզնից վռագ ենք,  
 Մենք էլ մեր գրութեամբ կը պատերազմենք,  
 Զօր գիշեր անդադար տալով թուուցիկ:

Հնչակեանը ասեց թուրք բռնակալին  
 Մենք էինք բողոքող դէպի Պապ-Ալին,  
 Պահանջելով հայրենեացը բանալին  
 Մտահան բրել էք որ չնգունեցիք:

Դաշնակեանը ասեց խօսքերնիդ շատ թանգ  
 Ձեր հարցի փոխարէն մենք էլ մտանք բանկ,  
 Եկէք, եզբայրներ մենք ձեռք ձեռքի տանք,  
 Օտարներից երբ դուք օգուտ քաղեցիք:

Արմենեանը ասեց եզբայրք սիրելիս,  
 Մէկդ արեւըրում իսկ մէկդ հիւսիս  
 Դործ առաջ դնելով մոռացաք դուք զիս  
 Պառաւական ոճով մեզ բամբասեցիք:

Հնչակեանը ասեց Զէյթունա լանջը  
 Կուուում էինք չը լսեց ձեր աղանջը,  
 Մենք շատ բողոքեցինք այդ վեհ պահանջը,  
 Այն ժամանակ արդեօք դուք ո՛ւր մնացիք:

Դաշնակեանը ասեց խօ չենք անասուն  
 Անաշխատանք գոմը մնալ փափկասուն,  
 Մենք էլ շատ կոուեցանք Վան, Մուշ և Սասուն  
 Միշտ ներհակելով մեզ շատ վնասեցիր:

Արմենեանը ասեց դուք սաթլճան էք,  
 Որ միշտ միմեանց կը դաւաճանէք,  
 Ձեր Արմենեայ եղբօր լաւ էլ ճանաչէք  
 Հարազատ գործերնուդ որն որ գործեցիր:

Հնչակեանը ասեց խօսքդ ճանաչէ,  
 Սուրբ գործողը կարգին պարտաճանաչ է.  
 Աճօթ հազար գքեզ, վարքէդ ամաչէ,  
 Որ այդպէս մեր վրայ կարծիք կարծեցիր:

Դաշնակեանը ասեց չեմ գիտեր ինչպէս  
 Կարող եմ համոզել ես ձեզի պէս պէս,  
 Նախ փրկենք հայրենիք ընենք կէսուակէս,  
 Ձեռք շառածի բաժան բաժան բաժնեցիր:

Արմենեանը ասեց այո այդ մասին  
 Այժմ կը լինիմ ձեզ ընկեր միասին.  
 Գարզ խօսիմ որ տէր չեմ ըլլար վնասին  
 Եթէ բոլորովին ձեռից հանեցիր:

Հնչակեանը ասեց մենք կըլլանք ընկեր  
 Այդ գործը մենք վաղուց ենք մտադրեր.  
 Թէ շահ և թէ վնաս ունինք վերեւ տէր,  
 Երբ որ մեզ օգնութեան հրաւիրեցիր:

Դաշնակեանը ասեց ունինք նպատակ  
 Այլ ևս չը մնալ գոռ բռնութեան տակ.  
 Ես չեմ ասեր մեզի եղիք հպատակ  
 Հայրենիքի սիրուն եկէք միացիր:

Արմենեանը ասեց, կըլլամ սև երես  
 Եթէ որ բաժանուիմ իմ ծրագրէս,  
 Դուք կոուելով մենք կը լինինք հեռատես,  
 Յետոյ ձեզ կը յայտնենք թէ ինչ քաղեցիր:

Հնչակեանը ասեց շատ վնասուեցանք  
 Կոուոյ ասպարէզից մենք չը հեռացանք.  
 Մենք էլ մի ժամանակ մեծ ուժ ունեցանք,  
 Մեր փառքն ու պատին էլ ոտնակոխեցիր:

Դաշնակեանը ասեց կուգայ գարունը  
 Թռչիւնն էլ իւր համար կը շինէ բունը,  
 Ափսոս չէ որ պիտ խանգարէք ձեր քունը,  
 Մենք շարշարուինք գոնէ դուք հանգստացիր:

Արմենեանը ասեց գլուխս տարիք,  
 Աշխատեցէք եթէ որ ունիք կարիք  
 Մեր ձեռքիցը չը գար օգնելու բարիք  
 Թէկուզ էլ յիշեն մեզ իբրեւ մուրացիր:

Հնչակեանը ասեց ունինք մեծ եռանդ  
 Դաշնակեան եղբօր հետ թէ աստ և թէ անդ  
 Զուտով ճաճկաստանը կ'ենենք քար ու քանդ,  
 Կազատինք հայրենիք ինչ Գուլգարացիր:

Դաշնակեանը ասեց անփոսս այն տառին  
 Որ վայելում էք դուք Արմենեա բառին,  
 Ձեզ ձեւացնելով Աստուծոյ գառին  
 Լուսատու աստղերու նման փայլեցիր:

Արմենեանը ասեց ունինք աստղ, լուսին,  
 Ոչ մի ժամ չենք մնար երբէք ձեր յոյսին,  
 Միրոյ ողջոյն կուտանք Միս և Մասիսին  
 Թէ որ ծանձան ծանձան դրօշ պարզեցիր:

Հնչակեանը ասեց այս ինչպէս վիրձանք:  
 Անմիութեամբ տուինք ազգին հախճանք:  
 Լոկ խօսակցութեամբ միշտ տալով պարծանք:  
 Ազգային միութեան դռներ փակեցիք:

Դաշնակեանը ասեց բազդիս անիւր  
 Անտեղի վնասեց քաջերնուս թիւը,  
 Հազար ինն հարիւր շորսի կռիւր  
 2ը տեսար որ սարսափ տիրեց Օսմանցիք:

Արմենեանը ասեց տեսէք մեր անուան  
 Տարածուած եւրոպայ աշխարհ ամենայն,  
 Հնչակ Դաշնակն ինչ է կասեն Արմենեան  
 Որքան էլ որ դուք ձեր թիւը գտնեցիք:

Հնչակեանը ասեց այդ խօսքդ արդար  
 Այդու առթիւ դուք ունեցեր էք դատար.  
 Չեր անուն կը յիշեն մինչև գարուց դար  
 Ինչպէս որ կը յիշուի կեղծ փարիսեցիք:

Դաշնակեանը ասեց, ընկեր ենք առաջ  
 Կուրեր ենք, պիտ կուրենք անխնայ քաջ քաջ,  
 2ը նայելով երբէք թէ ձախ և թէ աջ  
 Թէկուզ էլ կոտորուի ողջ հայաստանցիք:

Ընթերցող դու ասէ, հերթը քեզ ընկաւ  
 Հեղինակս կարծեմ ականջդ մտաւ,  
 Յոյս հաւատ ինձանից բոլորը կտրաւ,  
 Ահա քեզ մի անեղ անիրաւութիւն:

Ընթերցող եմ կասեմ, թերի մի թողուր,  
 Մեղաւորն ու արդարն մեզ չը տուիր լուր,  
 Կեանքիցդ վախճալով ինձ թողիր տխուր,  
 Սրանով ես չեմ տար քեզ հաւանութիւն:

Հեղինակ եմ կասեմ, իրաւունք ունիմ  
 Երեքից էլ երբէք ես մի վախ չունիմ,  
 Բոլորին էլ սիրով սրտով կնդունիմ,  
 Եթէ որ ձեռք առնեն միաբանութիւն:

ՈՎ ԸՆԹԵՐԿՈՂ

Ով ընթերցող մի քիչ սրէ ականջդ  
 Տես թէ ինչ եմ ասում քեզ հոգով սրբով,  
 Քո եզրայրն է կտրուտ տուող պահանջդ,  
 Որ դարեր ի վեր քեզ ատում է սրտով:

Թէն շատ խօսի, գլուխդ ցաւաց,  
 Կերողութիւն եզրայր քո ցաւը տանեմ,  
 Արդարութեան մասին խոր քննէ վեր կայ  
 Յաւս քեզ չը յայտնեմ հապա ինչ անեմ:

Ով էր պոչող կամ մահ կամ ազատութիւն,  
 Գոռում գոչումով մեզ ղոտքի հանողը,  
 Չասեմ դուր փճացաւ հայոց ազգութիւն  
 Կամ թէ ովք են պէս պէս սերմեր ցանողը:

Էլ ինչ էք սպասում մայր Հայաստանի,  
 Քանի որ չենք սիրում միաբանութիւն.  
 Մեր յոյսերը բաժին եղաւ սատանի,  
 Արդէն մեզ յայտնի է հայոց պատմութիւն:

Ահա Արմեն, Հնչակ և մին էլ Դաշնակ,  
 Թող հայ կաթուղիկը, բողոքականը  
 Դեռ ինչեր պիտ ծնին հայկին յիշատակ,  
 Մեզի մեծ ամօթանք, բաւ է այդբանք:

Միութիւն կը խնայրեմ հայ ժողովրդից,  
 Ողբերգութիւնս է միշտ այդու մասին,  
 Թշուառ հայրենիքնիս թուրքից թէ քուրդից  
 Չափ ու սահման անցաւ հայոց վնասին:

Չայնովս արդար եմ, բայց հողուով անյայտ  
 Քարոզիչ եմ դառել հայ ազգի մէջը,  
 Եթէ գրուածներուս շքնծայէք հաւատք,  
 Ասորի ազգի պէս պիտ գղջար վերջը:

Այդ առանձնացումն է որ հայոց հարցը  
 Եւրոպայի առաջ խաղալիք դարձաւ,  
 Շս ինչ ասեմ սրանց նման եղբարցը  
 Որ մինը միւսին հակառակեցաւ:

Պղտոր ջրերու մէջ տղրուկ սրսալէ,  
 Զկնի էլ ոչ մի շունին հնարը,  
 Ինչ հոգսերն է ազգը որ վնասուել է.  
 Դրանք միշտ ածում են իւրեանց քնարը:

ԵՐՐ ՈՐ ԿԸ ԼՍԵՄ

Երբ որ կը լսեմ սուրբ Լուսաւորիչ  
 Հայոց հաւատին եղեր է փրկիչ,  
 Օրէնք հաստատեր մեզ համար անմահ,  
 Սուրբ գահին վրայ դրած տեղապահ,  
 Որ պէտք է հովուէր մի բունն հոտը  
 Իբրեւ մի գրաւ մնայ իւր մօտը,  
 Թէ որ չիմանայ հօտին վնասը  
 Կամ չը ճանաչէ ուտիք ու պասը  
 Միայն թէ յիշէ, տէր դու ողորմեայ,

Ինձի կուշտ հաց տաս միշտ ամենօրեայ.  
 Իւր հօտը անտէր սարի մէջ թողած  
 Գայլ ու գազանի առջևը սոված  
 Եւ այնուհետև յանձնէ տէրտէրին  
 Թէ հովուէ հոտը տէր եղեր բերքին.  
 Նա էլ ձեռք առած խաշը, մկրատը,  
 Բուրդէն բուրդ խուզէ իսկ կաթէն կաթը,  
 Եւ այդ տեղ չըլլայ նա պարտաճանաչ  
 Միայն թէ գրկէ աւետարան խաշ  
 Չուզէ շարչարանք, միայն օրհնէնքով  
 Իւր խեղճուկ հօտին խաբէ կրօնքով  
 Եւ երբոր հովիւ հօտ չը ճանաչէ,  
 Սուրբ էջմիածնայ գահից շամաչէ,  
 Հապա ես շասեմ Աստուած վեր վկայ,  
 Մեզ պէս անօրէն ոչ մի ազգ չը կայ:

Եւ երբ որ տեսնեմ կազմակերպութեան  
 Պատճառ է դառել անթիւ կորստեան,  
 Որ թերի թողնի գործունէութիւն  
 Մի ազգի մէջ տեղ չըլլայ միութիւն,  
 Բաժանուած ցեղ ցեղ հոտն ու հովիւը,  
 Պակաս չը լինի վէճ ու կռիւը,  
 Ամէն ոք վայլէ պէս պէս սոստիճան.  
 Եղբայրը եղբօր եղած դաւաճան  
 Որ միշտ ճանապարհ թէ գնան անսանձ  
 Մինը միմեանց որ վարուի նախանձ,  
 Միթէ ամօթ չէ մեզ այդպէս վարուել  
 Հայրենեաց բաղդին դէմ առ դէմ լարուել.  
 Հապա մենք ինչու դրինք նպատակ  
 Ու ընկանք այնքան անմեղ արեան տակ.

Յեզափոխութիւն թէ ինձի խաբէ,  
 Ղրկէ կուոյ դաշտ արիւնս թափէ  
 Յետոյ ցաւ չզգայ նա ինքնիստեան  
 Միշտ պատճառ ինի մեզի կորստեան.  
 Թէ իրենց կնքած կնիք ուրանան  
 Այն մարտիրոսաց թիւը մոռանան,  
 Ինձ հարկաւոր չէ ձայն բարձրացնել  
 Անմեզ արիւններ չը մոռացունել.  
 Թէկուզ կօմիտէ թէկուզ խմբապետ  
 Միթէ պիտ շասեմ թէ ինչու են պիտ  
 Կամ թէ նախագահ և կամ թէ բիւրօ,  
 Թէ չուզեն վառուել հայրենեաց հրոյ,  
 Հապա ես շասեմ Աստուած վեր վկայ,  
 Մեզ պէս անապինու ոչ մի ազգ չը կայ:

Երբ եթէ տեսնամ հայ հարուստին լի,  
 Աշխարը իրան ըրած բանալի,  
 Մի դռնից ելնէ և միւսին մտնէ,  
 Բազդաւորութեան դուռը նա դտնէ,  
 Քանի թէ ունի լիալի գանձը  
 Առջատի գլխին որ զնէ սանձը,  
 Էլ Աստուած գիտէ և իրան կամքը  
 Թէ ինչ տեսակէտ տանի խնամքը,  
 Եթէ մի օգնէ, շորսը ստանայ  
 Փողովրդի մէջ դառնայ սատանայ:  
 Մինը կողոպտէ, հասնի միւսին  
 Չը համբերելով ուտիք ու պասին  
 Եւ չը մտածէ թէ մենք շունիք տէր.  
 Եզել են ամէն միջոց գայլակեր,  
 Միշտ կողոպտում են սյւրբեր մի կողմով,

Խեղճ հայի գլխին պատած են հողմով.  
 Հարուստներից զատ էլ չունի մի ճար,  
 Հացի փոխարէն թէ ուտեն բանձար.  
 Էլ ինչ պէտք է մեզ մեր հայ անունը  
 Որ կուզենք քանդել մեր եղբոր տունը,  
 Խեղճուկ աղքատը մերկ, նօթի, սոված,  
 Իւր գերդաստանով սև օրի հասած,  
 Հապա ես շասեմ Աստուած վեր վկայ  
 Այնպէս հարուստին վիզը տակ մնայ:

ԵՍ ՈՉ ԲԱՓՓԻ ԵՒ ՈՉ ԳՆՄՆՈ

Ես ոչ Բաֆֆի կըլլամ և ոչ էլ Գամառ,  
 Որ անունս յիշուի իբրեւ բանաստեղծ.  
 Թէպէտ հողիս բարձր գրիչս իսպառ,  
 Գարձեալ իմ մտքերիս մէջտեղ չը կայ կեղծ:

Սիրահար երգիչ եմ հայրենեաց սիրուն,  
 Ձօր ու գիշեր ես պիտ երգեմ անդադար  
 Ինչպէս կարող մոռնամ մարտիրոսներուն,  
 Որ զեռ ոսկորներնին չէ առած դատար:

Ամբիոնը ելած սէր չեմ քարոզում,  
 Կամ Հայրիկ Խրիմեան, կամ հայր Ալիշան.  
 Փողի էլ սիրհար չեմ, անուն եմ ուզում  
 Ունենալ ազգիս մէջ մի փոքրիկ նշան:

ԱԽ ՀԱՅՐԵՆԻՔ

Ախ հայրենիք քեզ երբ պիտ լինի տեսնամ  
 Պաղակ աղբիւրիդ մօտ հանգստանայի,  
 Չամ փունդարիդ ջրով երես լուանամ,  
 Ուռենիններիդ տակ քուն մը ըլլայի:

Խաչինակ, Պապունակ և Կեռաս աղբիւր  
 Բոլորիդ էլ մէկ մէկ օր լինէի հիւր,  
 Մեր ունեցած ամէն մի ցաւերը բիւր  
 Մտահան ընելով կը մոռանայի:

Սուրբ Յովհաննէս բարձր սարիդ ելնելով  
 Դիտէյի շորս կողմս կարօտ առնելով,  
 Սուրբ Վառվառայ կոյսի մաղթանքս տալով,  
 Դարին գլուխ նստած ապշած մնայի:

Բարև տալով Անեգրի գիւղ օթևան,  
 Մի կորուստդ եկաւ ելաւ երեւան,  
 Մեր անունն է իսկ Գղիբեան Միհրան,  
 Երանի այն աւուր եթէ տեսնայի:




Ո՛հ ԱՌԵՆՏՈՒՐ

Ո՛հ առևտուր, առևտուր,  
 Մարդու երես կնես մուր.  
 Կուտաս, առնել չես կրնար,  
 Միայն թէ ունիս, էլ տուր:

Երբ տուած ժամանակդ  
 Միշտ նա է բարեկամդ.  
 Եթէ ասիր առիր տուր,  
 Կելնէ հեծնայ քամակդ:

Ուսկից տաւերնիստ բերես,  
 Պատուովդ կլլաս սևերես.  
 Այժմեան առևտուրներով  
 Դժուար է հաց մը ճարես:



ԹԷ ՌԻՆԵՆԱՄ

Թէ ունենամ քեզ պէս ընկեր, ինչու վախնամ քուրդ ու թուրքէն  
 -Քո չինար հասակին մատաղ ղեկաւար Ռչտունի Գուրգէն.  
 Սուրբ նպատակդ ուր թողիր, ուխտածէիք որ գնալ Վան,  
 Ինչու թմբաւ թե թիկունքդ, որ կանգ առերէք Երևան:  
 Մեզ հանիր տաճկաց սահմանը մի փոքրիկ խմբով միասին,  
 Ուշքդ միայն հայրենիքն էր, ձեռիդ խաղալիքը մոսին.  
 Ուր մնաց քո ձագուկները թուրցիր աշխարհէ աշխարհ,  
 Ասա՛, ով եղաւ պատճառը որ կորուցիր քո ճանապարհ:  
 Այսպէս էլ շատերի սրտում փափազ եռանդ ունեցողներ  
 Աւաղ մնաց անկիւններում, երբէք չեղաւ հոգացողներ.

Ո՛հ ինչքան ցաւալի խեղճ է ազնիւ խորին մտածողին  
 Արդեօք ես ինչ՞անէ՞ծք կարգամ մեզ ցիր ու ցան հալած սղին։  
 Գարձեալ թող սրտիդ մէջ փայլէ քո սուրբ ազնիւ նպատակը,  
 Երախտամոռ հայերի պէս չ'մոռնանք մեր նահատակը.  
 Միշտ էլ վրէժխնդիր լինինք, թէ որ նպատակի տէր ենք  
 Լաւ է մեզ համար մեռնելը, քան թէ այսպէս կեանք վայելենք։  
 Մեր ժամանակը անցել է շահի աղբիւր որոնելուն,  
 Քանի որ անձնանուէր ենք մեր հայրենեաց փրկուելուն.  
 Ա՛խ, թէ որ մենք չենք վայելած բնութեան փառք ու պսակը,  
 Գոնէ հայրենիքի սիրուն սև հողին տանք այս հասակը։  
 Ինչու մնանք մութ խորշերը թուխսը նստած հաւինման,  
 Արդէն՞ զրկուած ծնողներից շուտով ըրել ենք մտահան.  
 Ելիր, վեր կաց, ժամանակ է ձագուկներդ հաւաքելու  
 Բարձր սարեր դաշտ ու ձորեր, մեզ կսպասեն դայալայելու։

### ԹԵՎԾԻՐԷԹ

Ով հեղինակ, ով հեղինակ, դու ինչ գիտես իմ բաղձանքս,  
 Որ յիշում ես նպատակս, չ'տեսնալով հաւածանքս.  
 Ընկերդ եմ անկեղծօրէն, դեռ ունիմ հաւատ ու և յոյս,  
 Առանց շղթայ կապկապուեր եմ, չէ երևում մի տեղից յոյս։  
 Թող ինձ ցաւովս այրիմ տապիմ, բաւական է որ ինձ գրգես.  
 Վայելուչ չէ այդ խօսքերդ որ իմ անմեղ գլխին բրդես,  
 Այսքան տարի գուր շարշարանք գուր արիւններ որ թափեցինք  
 Ով է արդեօք գեհնատող թէ մենք միմիանց խաբեցինք։  
 Ահա կեանքս, ահա փառքս, վաղուց է անձնանուէր եմ,  
 Տոբից, դռնից, ծնողներից բոլորովին զրկուեր եմ.

Ամենայն ժամ փափագ եռանդ, ումից ընեմ փոխառութիւն,  
 Թող այսուչետ շարագործներ որոնեն իրանց փրկութիւն։  
 Թէ կենդան եմ, պիտ աշխատեմ շահագործելու ապագայ  
 Մինչ լինի հայը միաբան, ոտքի կանգնելու ժամը գայ.  
 Միթէ ես քո հեղինակին կարօտն եմ միշտ լսելու,  
 Ունիմ միջոց երկար թէ կարճ ժամանակին սպասելու։  
 Աւաղ, աւաղ տառապում եմ գօր ու դիշեր ես լալագին,  
 Աշխարհի մէջ էլ բան չ'կայ քանդ ընկերներ թանկագին.  
 Այո ունինք մայր Հայաստան, ինչ սոխակներ ու բուրաստան  
 Գայլայլելու արժանի չենք, ահա քեզ այսպէս պատասխան։  
 Ա՛խ, ստուեաման սրտիս մէջը մի դնէր կրակ ու բոցը,  
 Հայոց ազգը դեռ քներ է, ինչ շուռ կտաս օրօրօցը.  
 Գուցէ զարթնի դարձեալ անզամ մեզի թշնամոյ ոտքի տակ  
 Անչեն մեր մի քանիսներին, իգուր շլինինք նահատակ։

Ով ընթերցող պարոնայք, խոնարհաբար խնդրում եմ  
 որ իմ այս խենթ-խելօք գրուածքի մասին գիջողաբար  
 վարուել, որովհետեւ բարձր ճեմարաններ աւարտած չեմ,  
 միմիայն կարողացայ մի քանի մտքեր պարզելու հասա-  
 բախութեան առաջ։

Անձս Սեբաստիոյ նահանգից, Չապին-Գարահիսար քա-  
 ղաքացի, Կ. Պօլսոյ բանկ օտտօմանի դէպքից սկսեալ թա-  
 փառաշրջիկ լինելով դէս ու դէն, թէ յեղափոխութեան և  
 թէ ժողովրդի կեանքին շփուելով այլ և այլ խլրտումներից  
 զրդուած, այս ինքնաշխատութեամբ պատրաստեր եմ,  
 Գովկասի հայ-թրքական բնդհարումների ժամանակ գին-  
 աօրական ծառայութեանս մէջ։

**ՈՒՐԷՔ ՄՈՒՐԱՏ**

Ուրէք Մուրատ, Պիծայ, Յարութիւն,  
Անդրանիկ և քաջ Խան.  
Եղբայրս է ինձ թշնամացեր,  
Ջուտով հասնիք օգնութեան:

Ոտը գլուխ անյայտ ազգի  
Ծառայելը վայել չէ.  
Թող արևելք թէ հիւսիսից,  
Քամին էլ պաղ-պաղ փչէ:

Ահա արդար հեղինակիս  
Վերև Եստուած տամ վկայ.  
Ջուր է, գուր է, ձեր ջանքերը.  
Հայ ազգի մէջ սէր չկայ:



Ով հայ ժողովուրդ, արդեօք ձեզ յայտնի չէ որ տասներ  
հինգ տարուայ ընթացքում միմիայն հնչակ և թէ գաշնակ  
կուսակցութիւնների ետևական անուան շահախնդրութեան  
մասին հազարաւոր նշանաօր հայդուկներ գոհ ենք տը-  
ւած թէ Տաճկահայաստանի, թէ Եգիպտոսի, թէ Յունաս-  
տանի թէ Պուրղարիայի, թէ Բուսանիայի թէ Ռուսաս-

տանի, թէ Պարսկաստանի և մինչ Ամերիկայի մէջ, թող  
այլ և այլ խորշերում, որ ես շատ տեղերու ականատես  
եմ, երբ ուրիցէ կազմակերպութեան վերաբերեալ վէճ մը  
ծագում ունենալու ժամանակ մին միւսին անպատուելով,  
յանկարծ կրակներ տեղի ունենալ միմիեանց դէմ, և այդ  
տեղ քանի քանի գոհեր անմեղ փոռւած գետնի վերայ,  
կարծես թշնամոյ արշաւանքի ելածի նման:

Ովքեր էին այդ անմեղ արեան պատճառները: Կազ-  
մակերպական ինտելիգենտ քարոզիչներն էին, որովհետև  
հայ ժողովրդի միամիտ սրտերու մէջ տեղ մտնալով, ազ-  
գային միաբանութեան հողին խլած էին:

Երբ ընկերական ժողովքի կը ներկայանային իբրև  
քարոզիչ, եթէ գաշնակցականի կողմից լինէր, զօրօրինակ,  
ազգային ամբողջ ուղղութիւնը իւր կողմը առնելով, հըն-  
չակեան ծրագիր անպատուում էին և այնպէս էլ մեր սրտի  
մէջ կը տարորեցնէին, որ ուրիշ անգամ մինչև իսկ  
չէինք ուզեր հնչակ բառը գործածել: Ես անձամբ հետա-  
քրքիր լինելով որ եթէ սրանք իսկապէս յեղափոխական  
լինին, ինչու համար իրանց եղբօրը պէտք է դաւաճանեն:

Ապա ուրիշ անգամ իմանալով որ հնչակեանի կողմից  
մի պատգամաւոր եկած է այսպիսի տեղ մը պէտք է ըն-  
կերական ժողովք կայանայ, այս մասին մեծամեծ փա-  
փազ ունեցայ ներկայ գտնուել և տեղեկանալ թէ արդեօք  
դրանց նպատակն ինչ է, վերջապէս միամիտ ընկերների  
շնորհիւ կարողացնը եմ ներկայանալու, տեսի ինչպէս  
որ մեր պ. գաշնակ ինտելիգենտ քարոզիչը իւր ծրագրի  
համեմատ մեզ կը քարոզէր, հնչակն էլ նմանապէս կը դա-  
ւաճաներ գաշնակ ծրագրի վերաբերեալ, ամբողջ ազ-  
գային ուղղութիւնը իրանց կողմը առնելով:

Ով խեղճուկ ճնշուած հայ ժողովուրդ, այժմս ևս ուժ վերայ հաւատարմութիւն ունենամ, քանի որ նա էլ իմ եղբայրս է նա էլ: Անա այսպիսով հայ ժողովրդի մէջ գանգան սիրմեր ցանկելով, միամիտ սրտերի մէջ հակառակորդութիւններ կայացրին, Աստուծոյ բարին մինչև անգամ միմիանց խնայելու, աւելի հաշտ և խոնարհ կը վարէինք այլ և այլ ազգերու հետ քանզ Երբայրը իւր եղբոր հետ, էլ այսպիսի ազգութեան մէջ տեղ ինչ հողի հաւատք կարելի է պաշտել:

Հայ ժողովուրդ, զեռ հարիւր տարին չէ լրացած ոչ մէկին, որ ինքնիշխանութեան տէր դառեր են Բուլղարիայ, Փարսապղ, Սերբիայ, Յունաստան և Բուսնիայ. արդեօք լսած էք որ նրանց ապստամբութեան ժամանակները մեր հայոց նման կեղտոտ նախանձ գործնէութիւններ մեր չափ. ոչ մի անգամ: Ինչպէս որ կամ մահ կամ ազատութիւն գոչեցին միաբանութեամբ, այնպէս էլ Աստուծոյ նախախնամութիւնը օգնեց, օտար պետութեան սրտի մէջ գոյթ գցելով, ազատուեցան մահմեդական սուրերի և օրէնքների ձեռից, և իրանց թափած արիւնները կորուստի չը գնաց:

Ինչպէս որ մեր քրիստոնէական գրուածքը կատ, որտեղ կայ սէր միութիւն, Աստուած հոն պատրաստ է. քանի որ մեր հայոց ազգի մէջ այդ սէր միութիւնը չը կայ, իհարկէ Աստուած էլ մեր լաց ու կոծը չէ լսում. եթէ մի ազգի գլխից Աստուած կը հեռանայ, յայտնի բան է որ այն ազգին սատանաները կը տիրապետեն, ինչպէս որ այսօր հայ ազգի շորթորդ մասէն երկու մասը սատանայ ձեացած հայ ժողովրդի մէջ ման է գալիս, էլ ինչ կարելի է այդտեղ ուզղել սէր միութիւնը: Միմեանց ճանաչելը, մին միւսին

խոնարհութիւնը մեծը փոքրին կամ փոքրը մեծին յարգել: Եթէ այս ընթացքով շարունակուի հայկական հարցի գործունէութիւնը առանց միաբանութեան, հաւատացէք որ վերջ ի վերջոյ հայը մաս մաս բաժանուելով միմեանց կը կոտորէ արդէն շոշորթներից երեւում է:

Հազար միտոս մեզ համար նահատակուող իւր սուրբ արիւն թափողին, և մինչ այժմ կուտող հերոսներին, որ իրենց նպատակները թերի թողլով, որ քանի քանի տարիներէ ի վեր սար ու ձորեր և արեան դաշտերու մէջ ճնշուում հայոց փառքի համար միշտ անգամ կուրծքերը քաց թշնամոյ գնտակի դէմ կանգնած էին: Բայց այսօր շատերը բամբասում են ամբողջ կուտող ուժերի դէմ որ մեզ ինչ օգուտ հասցրին թէ Ֆէզայիները և թէ այլ կուտող դասակարգերը: Արդէն մեր հայերի երախտամոռութիւնը չափ չունի, որովհետև մի ազգ եթէ հաստատապէս ղեկավարող գլուխ չունենայ ամէն մի բան կարելի է յուսալ:

Ահաւասիկ մի դատողութիւն ևս. ամբողջ հայ ազգութեան մէջ փառք ու պարծանք դառեր էր ճնշուած Հայաստանի անունը լոկ յիշելով: Այժմս Հայաստանի վարքը և անտանելի գրութիւնը ով է նկատի ունի, Հայաստան կայ, կամ չը կայ: մինչև անգամ մի քանի դասակարգեր յիշելով որ իւրօքանչիւր ոքերի իւր սեփական ծնուած երկիրը իւր Հայաստանն է, ուր են հայրենեաց վարքին նախածանօթ և գործակատար անձնաւորութիւնները, հեռատեսներ ձեացեր են, երբ տաճկահայաստանի հիմքը բանգել տուած ժամանակին դազար չուզէին առնել, որովհետև հանգամանքից օգտուում էին, ինչպէս թուրքը կատէ (գուրդ տուեմանը կիւնիւ սէվէր) այսինքն գայլը փուս եգանակներ կորսայ, հապա ինչու այս նեղ գրութեան մէջ

հարցնող, փնտրող մը չէ երեւում, ուրեմն զրանք միշտ փառքին կարօտ են; ոչ թէ իրագործմանը: Ամենայն ոքերի կեանքը և փողերը իւրեանց քաղցր է թուում, քան թէ իւր մայր Հայաստանի տառապանքը: Լոկ խօսակցութեամբ, կեղծ լաց ու կոծով հայրենեաց երբէք չէ կարելի սիրել:

Արդարապէս սիրողները նրանք էին, որոնք Սուլթանի բանտերու մէջ փթելով, խեղտամահ լինելով, ծովեր թափուելով, կազախան հանուելով, շամփուրներով տաղուելով և մահմետական օրէնքներով իւր քաղցրիկ կեանքը և քաղցրիկ հոգին աւանդեր է: Եւ մնացեալ անթիւ հերոսներ ազատ կամբով հայրենեաց սիրոյ համար շուղեցին բաժանուել իւրեանց մայրենի հողից, սրտերի վրայ առած քնեցին որ իւրեանց կարօտութիւնը առնեն:

Մենք միմեայն թէ աշուղական երգերով այլ և այլ պարծանքներով գորտերի նման կռկոցցնիս չը կտրելով, նրանց հոգեհանգիստն ենք կատարում ինչպէս մի սիրահար սոխակ հայրենեաց: Այո, չեմ ուրանար, այժմս էլ կան շատեր որ հայրենի սիրոյ վառում, բայց մեր հայն ի հայոց տուն բանտոցները պատճառ են դառեր նրանց նպատակի դէմ, որպէս սոխակը վարդից բաժանելու նման, բաժանեցին, որ միմիայն նրանք էին ազգային հաւատարիմ ծառայողները, և ձեր աչքի լոյսերը, որովհետեւ ոչ շահասիրութիւն ունին և ոչ ժողովրդի ճնշում, բայց ինչ ընեն որ բաղգերնին այնպէս բերաւ, կազմերի մէջ հաշտութիւն չըլլալուն պատճառաւ, բոլորին էլ կարծես սպաւոր թէ ու թիկուներնին ծոցերը ճնշուած դրութեամբ ցրուել են դէս ու դէն, ոչ մէկն էլ գնահատող չը կայ: Ինչպէս քանի տող վերեւ յիշեցինք, որ միայն սորա են հայրենեաց սիրահար, և նրանց սիրահարութիւնը ամբողջ

աշխարհին յայտնուած է:

Երբեմն յիշում ենք թէ հարուստ դասակարգը իւր փողը խնայում է ճնշուած հայրենիքից, բայց այդ մասին ես չեմ կարող ուրանալ որուն պատճառը մենք ենք, եթէ ականատես լինին որ կազմերի մէջ հաշտութիւն կայանալ և բուն ծրագրով միաբանութեամբ գործունէութիւն շարունակելը:

Հայ ժողովուրդ հաւատացէք որ իւրեան հարստութիւնը խնայող չէ, բայց այնպիսի զգուանք տուինք որ դու գացիր առիթ շնդկաստան փախուստ տուիր, ես առի Չինաստան անցայ, ահա այսպիսով կազմերի պատիւ թոյլատրեցինք: Կայ հասարակութեան մէջ ոմանք քանդում են, և ոմանք շինում և այդպիսով հայոց հարցը դեռ շատ տարիներ դարեր կերկարի, որովհետեւ եղել են մի բանի տեսակ ճիւղեր ամէն ոք իւր կողմն է քաշում, ինչպէս Քոնիովի առակ կասէ, կարապ խաչափարի ձուկին մի սայլի լծեցին որ սէլը երեքով միասին ուղղէին ճանապարհը. երեքն էլ իւր ուղղութեանը հետեց, կարապը, վեր քաշեց, խաչափարը ետ, ետ, և ձուկն դէպի գետ: Ահա այժմս էլ մեր հայոց գործունէութիւնը նմաներ է իսկ այդ անասնոց:

Ընթերցող հասարակութիւն, արդարապէս համոզուեցէք որ, յեղափոխութեան գործունէութեան մէջ ընկնող յեղափոխական մը, մի առ ժամանակուայ ընթացքում ընկերների մէջ ծանօթանալով, տեսնում է որ ամբողջին ներպատակն էլ մի է և այնպէս էլ իւր սրտի մէջ տպաւորեցնում է նպատակը անձուէր հերոս հայրենեաց սիրուն, ինչպէս որ մի երիտասարդ մի օրիորդի հետ անկեղծօրէն կը սիրահարուի, այլ չեն կարող ուրիշների վրայ ուշք

զարձնել: նմանապէս էլ հերոսների այդ նպատակն է և զրանց աչքին ուրիշ ոչ մի բան չէ երեւում, ոչ հայր, ոչ մայր և ոչ մահ, արդէն առանց սիրոյ աշխարհում ոչ մի բան գոյութիւն չունի, ի հարկէ հերոսները երբէք կեանքի տէր չեն, որովհետեւ գիշեր ցերեկ սար ու ձորեր այլևայլ ճնշումներ առանց անկողին, տաք, պազ, սովածութիւն, ծարաւ, անքուն, ի հարկէ սրանք անտանելի լուծիք են, բայց սիրահարի դէմ զրանք երբէք նշանակութիւն չունենար:

1905 թիւ երբ Կովկասի հայ-թրքական ընդհարումները որ սկսեց տեղի սեննայ, Կովկասի ամբողջ շրջանում, արդէն շրջապատուած է գանազան թիւրքերով, քրդերով, թուրքերը ունեցէ առիթ գտնելով, միանգամայն կամեցան հային բոլորովին վերջ տալ, որովհետեւ ունէին միաբանութիւն ոչ թէ միայն պարսիկը, այլ և մահմետական ցեղերով լարուած դէպի հայերը: Մի հային կարող է հասնել քսանը, և մինչև իսկ թէ Տաճկաստանից և Պարսկաստանից այլ և այլ թուրքերի խուժաններն էլ օդնութեան էին հասնում, տեսէք որքան միաբանութիւն, նաև Կովկասի հայ ժողովրդի անսահման յուսահատութիւնը բոլորովին տիրած էր: Դայով Հ Յ. կազմակերպութիւնները Հնչակեան թէ Դաշնակցական, տեսնելով որ ոչ մի կողմից թուրք խուժանների առջև ելնող չը կայ, հանգամանքը հասկանալէ յետոյ, որ հայ ժողովուրդը ճարահատուած ձեռից պիտ գնայ, և այդ դէպքում միմեանց հետ համաձայնութիւն ունենալով, ոտքի կանգնեցրեցին կռուող ուժերին թէ Կովկասի տեղական ճուտերին և թէ տաճկահայաստանից եկած զինուորներին և այլ զէնք բռնել կարողացողին և այդ ժամանակ ընդհանուր հայ ժողովրդի

մէջ կարծես մի ուրախութիւն էր տարածուած, որոնք որ միշտ ահ ու սարսափի մէջ էին. ներողութիւն յարգելի բնութեցող, յայտնի բան է որ տաճկաստանի բանալին Կովկասն է և ամէն միջոց սպասելիք ուժն էլ Կովկասն որ! համարեայ հայոց կետրոնն է որպէս ազատ քրիստոնեայ լիկիք այստեղ որ միայն թուրքի խուժանների քամին այդքան սարսափի մէջ որ թողուց:

Հապա տաճկահայաստանի կոտորածի ժամանակ մը տարերէք թէ արգեօք ինչ սև օրերու մէջ մնացած կը լինին ձեր որբիկ անդէն եղբայրները, որ կառավարութեան գօրքը մի կողմից Սուլթանի հրամանաւ, թուրք խուժանների այլևայլ մահմետական սուրերով անգէն հայոց թաղերը յարձակուելը մի կողմից, ականատես եղողը երբ յիշում է այն սև օրերը հէնց ծամերն է ցնցում. վերջապէս անպատմելի և աննկարագրելի է եղած կոտորումները յափշտակութիւնները, նամանաւանդ անբարոյական անպատուութիւնները որ տաճկահայաստանի հայն տեսաւ այդ սև օրերը դեռ մինչև այսօր էլ տեսնում է:

Այսուամենայնիւ, ունեցէք եղբայրասիրութիւն, երկպառակութիւնները զցէք, բաւական է և ձեր նպատակի տէր կռուող ուժերին յարգն ու պատիւն ճանաչեցէք որ միշտ անգամ ձեզ հարկաւոր է, գուցէ այսույետ մասնը մուկը պիտ քամիներ անպակաս լինի հայերու զլսից: Արդէն կազմերի մէջ եղած խլրտումները թէ ձեզ և թէ կռուող ուժերի մէջ մեծամեծ յուսահատութիւններ պատճառելուն տարակոյս չկայ. մենք ամենաբարձր յոյսեր ունէինք որ Հնչակ, Դաշնակ կազմերը կը միանան և ժողովրդի միջից մի մաս բամբասանքները և գանազան խլրտումների վերջ կըլլայ, սակայն հայոց բաղդը տեսէք որ այդ երկու կողմից

երկուքն էլ առանձին առանձին կազմերի բաժանման տե-  
սիլքներ են երեւում միմեանց դէմ հակառակորդներ ձեա-  
նալու: Այդպիսիներ պատոր ջրի մէջ տգրուկ որսալէ զկնի,  
ուրիշ ոչ մի արդիւնաբերութիւն չունին նիւթապէս և թէ  
բարոյապէս, բացի վտանգաբերութիւնից:

Դրա մասին էլ անարժան եմ մնլթ խաւերի մէջ խօ-  
սելու, միմիայն ընդհանուր հայոց ազգի համար համար-  
ձակութիւնս կը ներէ այսքանը որ հայոց ազգը ինչ նպա-  
տակ էլ որ ունի կարող է միաբանութեամբ վերջ տայ թէ  
ոչ մի բան չէ կարելի սպասել անձնապաշտպանութիւնից  
զկնի:

Երանի այն պարտաճանաչ հեղինակին և ազգային  
սիրոյ հոգևով մարմնով վառուող իրագործողներին որ ժա-  
մանակին տէր են կանգնում իրանց պարտականութեան:

ԱՇԽԱՐԻ ԿԵԱՆՔԵՐԸ

Աշխարհի կեանքերը մարդկանց համար է,  
թէ չը փոխուի մարդկային կերպարանը.  
Չարչարանք թող կրէ այն որ յիմար է,  
թէ որ չը ճանաչէ իւր պարտականը:

Հաւատք, յոյս, սէր և թէ միութիւն  
Միթէ սա չէր տիրոջը պատուիրանը,  
Մեզ համար էր կրեց նա խաչելութիւն,  
Որ ընդունեց սիրով Քրիստոսեանը:

Միութիւնը միշտ պայթող է պայքարը,  
Ներհակուելով ամպերի որոտմանը

Կը սասանեցունէ ամբողջ աշխարհը,  
Մղելով դէպ յառաջ իւր կարաւանը:

Աւանդ, ինչեք կնէ սէր միութիւնը,  
Թէ՞ որ իրագործէ աշխարհականը  
Շուտ կը հեռացնէ խոր տխրութիւնը,  
Փշրելով շղթան իւր գերութեանը:

Ով հայոց հարցը, Հայ ասելով մենք պէտք է  
իմանանք որ Հայկ նահապետի թողած յիշատակն ենք,  
բայց այսօր մեզ յայտնի չես թէ արդեօք որ հայի հարցն  
ես, որովհետև կայ հայ լուսաւորչական, հայ կաթողիկ և  
հայ բողոքականը. բացի դրանցից առանձին հայեր էլ ծնած  
են. ոմանք Արմենեայ, ոմանք Հնչակեան, և ոմանք էլ Դաշ-  
նակցական: Մենք ինչպէս կարող ենք այդ հարցը անձն առ-  
նել, չը գիտենք թէ արդեօք ո՞ւմ ես պատկանում և ձեր  
պատճառաւ միշտ անգամ միմեանց ոտնահարում և մի-  
մեանց կոտորում ենք շնորհիւ ձերդ անյայտնութեանը:

Արդեօք դուք որքան անարդար և անբաղդ հարց էք  
եղեր, որ մինչև իսկ մի քանի անգամներ բարձրանալով  
Եւրոպական պարլամենտներ, դարձեալ չը կարողացաք  
ուէ մի կերպ ձեր դատին վերջ տալու: Եւ վերջ ի վերջոյ  
եկաք անտէր անտիրական հայ ժողովրդի վզին բարձուար  
որն որ վեց դարերէ ի վեր օտարներ լծին տակ ճնշուելով,  
արդէն ինքնիստեան կիսամեռ վիճակի է հասել, և դու  
ինքդ էլ այսքան տարուայ ժանգոտած, փտած մի հարց  
վինելով, ընկել էք հայրենեաց ծոցում, թէ իմ ժանգերը  
մաքրեցէք որ դարձեալ փայլիմ ձեր վրայ. մենք հայերս  
մեր կարեաց չափ չը խնայելով մի բուռն արիւննիս, որ  
պէս զի կարողանայինք ձեր ժանգոտութիւնը մաքրել մեր

կաթիլ արիւններով, բայց ինչ օգուտ որ հազարաւոր տե-  
սակ ազգերի էք ենթարկուել. նա մանամաւանդ ձեր անի-  
բաւութիւնը այժմեան անմիաբան հայոց դէմ անսահման է  
թուում, ինչու որ դուք հին հին դարերից մնացորդ մի հարց,  
այսօր դալ մեր գլխին բուսնելը երբէք հաւանական չէ.  
միթէ դուք չէիք կարող երկու երեք հարիւր տարի առաջ  
աշխատել ձեր դատաստանին վերջաբանութեանը, այն ժա-  
մանակ ոչ այսքան ժանգոտած և այսքան էլ անբարդու-  
թեամբ ծանրացած կը լինէիք, և այսու ամենայնիւ աժ-  
մեան հայոց մէջ ոչ մի միաբանութիւն չկայ որ կարողա-  
նան ձեր մասին ուշադրութիւն դարձնեն ինչպէս որ սկզբ-  
բանէ աչքէ զցեցիք, անմիաբանութեան ձեռնից այնպէս  
էլ եկաք ներկայ գտաք, մանաւանդ դուք փորձառու հարց  
լինելով մեր նախնեաց օրէն, միշտ անգամ հեռատես պէտք է  
լինէիք հայոց գրութեան վրայ, ի նկատի ունենալով 300000  
անմեղ զոհերու դիակները:

Գնացէք մի կերպ ներկայացէք այն անձնաւորութիւն-  
ներին, որոնք որ ձեր շնորհիւ մեծամեծ գումարների տէր  
են դառեր, գուցէ խղճահարուին ձեր այսօրուայ անբար-  
տութեանը վրայ: Երկար խօսելու միջոց է հարկաւոր:

**ՀԱՅՈՅ ՀԱՐՅԸ.**

Հայոց հարցը, հայոց հարցը,  
Որքան մարդու տուն քանդեցիք.  
Դու արիւնածարաւ հարց ես,  
Որքանին էլ տուն շինեցիք:

Թէ որ լինէիր բաղաւոր,  
Քո հարցերը կատարուած էր.  
Ինչ որ քեզի էր հարկաւոր,  
Դրօշներդ ծածանուած էր:

Բայց ուր է այնպէս դադափար,  
Որ սուրբ ծրագրով դործեն.  
Եսական շահերի համար  
Տես այսօր քեզ կը քարկոծեն:

Թէ և խօսքերս շատ անձերու  
Կրակ ու բոց պիտի թուի.  
Դուռը դու բաց այն գանձերու,  
Որոնք որ քեզ կը ներհակուի:

Հոն կտեսնես սի բաղաբերդ  
Չարգարուած ճոխ-ճոխ սեղանով.  
Ա՛փսոս կաւելնայ դարդերդ,  
Կը խռովիք դուք մեզանով:

Ետեկցդ ման եկողը  
Թէ ուրէ մեր հայոց հարցը.  
Միշտ եղաք արեամբ ներկողը,  
Օրստ օրէ կարիք հացը:

Քո շնորհիւ շատ դիտնականք,  
Եւ մինչև իսկ երգիչները  
Քեզմով շատեր գտան փրկանք,  
Սուլելով խորդ սուլիչները:

Առանձին ես մնացեր եմ  
Հայ ժողովուրդին դիմելու.  
Մի քանի տող ճրգ-պըզ-ներով,  
Կուզեմ քիչ էլ ես կոթելու.....



Ո՛Ն ՈՒՇՔ ԴԱՐՅՈՒՐ

Ո՛ն ուշք դարձուր, պարոն, ողբերգութեանս,  
Բաւէ ինձնից հեռու քայլ առնուս պաղ-պաղ.  
Դու ես պատճառ դառել իմ գերութեանս,  
Եկ ինձ ընկերացիր, քո հոգուն մասաղ:

Սոխակի պէս այրոց վանդակներու մէջ  
Մինչևի երբ երգենք քաղցրիկ տաղերով.  
Ա՛սա ում հոգն է մեր կրակը անշէջ,  
Որ գերի ենք ընկել հին-հին դարերով:

Ով է չուզէ ազատ շնչառութիւնը  
Եւ վայելէ կեանքը իսկ տղամարդի.  
Բայց այսօր հայ ազգի անմիութիւնը  
Գլխաւոր հերոսաց թողեր է դարդի:

Ազնիւ դասակարգը թող խորին-խորին,  
Մտածէ թէ արդեօք ինչ փառքի տէր եմ.  
Որ արժանացել եմ այսպէս սև օրին,  
Հարկէ միշտ անգամ ես օգնութիւն խնդրեմ:

Ես էլ ցանկանում եմ զէնքի փոխարէն  
Գրկել իմ սիրելւոյ փափուկ անկողնում.  
Վրէժխնդիր չլամ քուրդ ու թուրքերէն,  
Երբ եղբօրս սպանում, քոյրիս են տանում:

Տէվրուշանի Ֆէտա

Վ Ե Ր Զ.

ИНС. № 39754

Արմ.

3-2492ա

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

ՊՍՀԵՍՏԸ

Տպարան «ԼՈՅՍ» Երևան

600.

ՀՀ Ազգային գրադարան



NL0339184

25476